



47. ԳՈՂ ՀԱՐՄԸ

Հարսու ու կեսուրի են ըլնում։ զրանք բոլ սիսեռ են ունենում։ Էղ հարսը շատ սիսեռակեր ա ըլնում։ Ասսու իրան օրը սիսեռը գողանում էր, տանում թաքուն էփում, ուստում։ Մի՞ն, է՛րկու, հի՞նգ, տա՛սը, օրեն մի օրը կեսուրը վարավուրդ ա անում, տենում՝ իրանց սիսեռի տոպարակը կեսքն ա ընկե։

«Կա չկա,— ասում ա ինքն իրան,— էս մեր հարսի բաներն առ թի կեսուրը սատանա էր, հարսն էլ պակաս չէր նրանից. ալ-րիալը ֆահմում ա, որ կեսուրը զլսի ա ընկե։
ո՞նչ անեմ, ի՞նչ շանեմ,— ասում ա,— որ ինձ վրա սայիշ շտանիս։

Օրեն մի օրը տունն ավելելիս մի հատ սիսեռ ա գտնում. վեր ա ունում տանում կեսուրը շանց տալի, ասում.— Ընթի՛կ ունի, քընթի՛կ ունի, կատվի նման դնշի՛կ ունի. նա՛նի, յարաք էս ի՞նչ ա։

Կեսուրն էս որ լսում ա, ինքն իրան ասում ա. «Յողն իմ գըլխին, ո՞նց ի էս խեղճ հարսի մեղքը վեր ունում. նա ըսկի չի էլ իմանում՝ սիսեռն ի՞նչ ա, ի՞նչ չի. ո՞ւր մնաց, թի գողանա»։

